**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«30 » մարտի 2015թ. **N 41** ք. Ստեփանակերտ

**«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 04 առ 06.02.2015թ. հրամանում փոփոխություն կատարելու մասին**

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 21-րդ հոդվածի 3-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի և ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 08 առ 28.01.2009թ. « Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողով ստեղծելու մասին» հրամանի համաձայն՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1.Վաղաժամկետ դադարեցնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամ Հասմիկ Արտյուշայի Հարությունյանի լիազորությունները՝ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ:

2. ԼՂՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամ նշանակել ԼՂՀ վերահսկիչ պալատի մեթոդաբանության և վերլուծության բաժնի վարիչ Շուշանիկ Լավրենտի Հայրապետյանին՝ երեք տարի ժամկետով: (Համաձայնությամբ)

3.Սույն հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի նախագահ, ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Գ.Ավագյանին, ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին և ԼՂՀ քաղշրջդատախազներին:

4.Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական Ա.Ա.Մոսիյան